# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՑ ԼՍՄԱՆ ԵՎ ՔՆՆԱՐԿՄԱՆ

ՀՀ Շիրակի մարզ 20 սեպտեմբերի, 2024 թ.

Ք. Գյումրի, Վարդանանց հր.1 ժամը՝ 15:00

2023 թվականի սեպտեմբերի 20-ին, ժամը՝ 15:00-ին, Գյումրու համայնքապետարանի վարչական շենքում կայացավ հանրային բաց լսում և քննարկում (այսուհետ՝ քննարկում): Քննարկումը վարեց Գյումրու համայնքի ղեկավարի տեղակալ Սուրեն Ջանոյանը:

**Հանրային քննարկման թեմա՝** «Բի Էյ Վի» ՍՊԸ-ի (հասցե՝ ք. Գյումրի, Երկաթուղայինների փողոց 51/7)կողմից ներկայացված՝ Գյումրի քաղաքի Երկաթուղայինների փողոց 51/7 հասցեում զուգարանի թղթի, խոնավ և չոր անձեռոցիկի արտադրամաս կառուցելու նախատեսվող գործունեության վերաբերյալ առաջին հանրային լսում:

**Ելույթ՝ Սուրեն Ջանոյան**

**Գյումրու համայնքի ղեկավարի տեղակալ**

Բարև Ձեզ սիրելի մասնակիցներ, սկսում ենք մեր հանրային լսումը «Բի Էյ Վի» ՍՊԸ-ի (հասցե՝ ք. Գյումրի, Երկաթուղայինների փողոց 51/7)կողմից ներկայացված՝ Գյումրի քաղաքի Երկաթուղայինների փողոց 51/7 հասցեում զուգարանի թղթի, խոնավ և չոր անձեռոցիկի արտադրամաս կառուցելու նախատեսվող գործունեության վերաբերյալ առաջին հանրային լսումը, քննարկումը հայտարարում ենք բացված:

Հիշեցնեմ, որ համաձայն կարգի, հանրային քննարկման մասնակիցը քննարկման դրված հարցերի վերաբերյալ կարող է ուղղել հարցեր, իր առարկություններն ու առաջարկությունները հնչեցնել բանավոր ձևով կամ դրանք գրավոր տեսքով ներկայացնել հանրային քննարկման քարտուղարին: Մասնակցիները կարող են իրենց առարկություններն ու առաջարկությունները ուղարկել Գյումրու Համայնքապետարանի պաշտոնական էլեկտրոնային հասցեին gyumri@gyumri.am կամ գրավոր տեսքով ներկայացնել քննարկման քարտուղարին, քննարկման ավարտից հետո՝ հնգօրյա ժամկետում:

**Զեկուցող՝**

**Արթուր Հովհաննիսյան**

**«Աքարա» ՍՊԸ տնօրեն**

Սույն նախագծով նախատեսվում է կառուցել արտադրամաս, որը գտնվում է Գյումրի և Ախուրյան համայնքների սահմանագծին, այն օրենքով սահմանված կարգով պատկանում է սեփականատիրոջը՝ «ԲԱԳԱՐՅԱՆ» ՍՊԸ-ին:Այս տարածքի գործառնական նշանակությունը արտադրական է, ուստի հարմար է գտնվել վերոհիշյալ տարածքը: Շինության նախագծային լուծումները կատարվել են պատվիրատուի պահանջներին և ՀՀ գործող նորմատիվա-տեխնիկական պահանջներին համապատասխան: Այն իրենից ներկայացնում է միահարկ

կառույց ՝ բաղկացած երեք չափաբաժիններից և իրականացվելու է հավաքովի մետաղական կոնստրուկցիաներից՝ սիփ կոչվող պանելներով:Նախագծով նախատեսվում է բոլոր ինժեներական ենթակառուցվածքների լուծումները համապատասխան տեխնիկական պայմանների:Արտադրամասն իր արտադրական հզորությամբ լինելու է Շիրակի մարզում առաջինը:Հիմնականում արտադրվելու է թաց և չոր անձեռոցիկներ, զուգարանի թուղթ և խոհանոցի թղթեր սրբիչներ՝ տարբեր չափսերի և դիզայնի: Հաստոցները ամբողջովին նոր են՝ տեխնոլոգիապես հագեցված, արդի պահանջներին համապատասխան, արտադրանքը լինելու է միայն բնական հումքով, արտադրամասը կապահովի 35-40 աշխատատեղ:

**Հարց՝**

**Հենրիկ Գասպարյան**

**Գլխավոր ճարտարապետ**

Թուղթը պիտի արտադրեք, թե՞ թուղթը պիտի բերեք, կտրեք դասավորեք:

**Պատասխան՝**

Արթուր Հովհաննիսյան

«Աքարա» ՍՊԸ տնօրեն

Թուղթը գալիս է Չինաստանից պատրաստի գլանակով, կտրատվում է և փաթեթավորվում:

**Ելույթ՝ Սուրեն Ջանոյան**

**Գյումրու համայնքի ղեկավարի տեղակալ**

Էկոլոգիայի հետ կապված խնդիր չի՞ առաջանա

**Հենրիկ Գասպարյան**

**Գլխավոր ճարտարապետ**

Ես կարծում եմ, որ ոչ, թուղթը բերելու են պատրաստի, պիտի կտրեն, դասավորեն, գրեն վրան, նոր բան չի սա,կան այսպիսիներ:

**Ելույթ՝ Սուրեն Ջանոյան**

Մեծ հաշվով ամենինչ պարզ է,այս հարցը մենք պիտի դնենք ավագանու նիստի քննարկմանը:

Քանի, որ այլ հարցեր և առարկություններ չհնչեցին՝ Սուրեն Ջանոյանը փակեց նիստը: Հաջողություն, շնորհակալություն:

Հանրային լսմանը ներկա էին 8 անձինք:

**Վարող՝**

**Գյումրի համայնքի ղեկավարի տեղակալ** **Ս.ՋԱՆՈՅԱՆ**

**Նախաձեռնող՝**

**«Բի Էյ Վի»սահմանափակ պատասխանատվությամբ**

**ընկերության տնօրեն** **Վ. ԲԱԳՐԱՏՅԱՆ**

13298

Հասցե՝ ՀՀ, ք. Գյումրի, Երկաթուղայինների 51/7
Հեռ.՝ +374 41071010
Էլ. փոստ՝ bagariocompany@gmail.com

07.08.2024

Թիվ 07

05. 08. 2024 թ.

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՎԱՐԴԳԵՍ ՍԱՄՍՈՆՅԱՆԻՆ
«ԲԻ ԷՅ ՎԻ» ՍՊԸ-Ի
ՏՆՕՐԵՆ՝ ՎՈԼՈԴՅԱ ԲԱԳԱՐՅԱՆԻՑ

ՀԱՐԳԵԼԻ ՊԱՐՈՆ ՍԱՄՍՈՆՅԱՆ

Հայտնում եմ Ձեզ, որ ք. Գյումրի, Երկաթուղայինների փողոց 51/7 հասցեում նախատեսում ենք կառուցել արտադրամաս:

Դիմում եմ Ձեզ <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 2014թ նոյեմբերի 19-ի <<Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին>> N 1325-Ն որոշման հավելվածի համաձայն (առաջին փուլ) նախատեսվող գործունեության վերաբերյալ ծանուցման և հանրային քննարկում կազմակերպելու համար:

Կից ներկայացնում եմ նախագծային թույլտվությունը (ճարտարապետահատակագծային առաջադրանք):

Կանխավ շնորհակալություն

Հարգանքներով՝
«ԲԻ ԷՅ ՎԻ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ՝ Վ. ԲԱԳԱՐՅԱՆ